# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1405 19.03.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Հիմք ընդունելով Դիտորդական խմբի 07.03.2014թ-ի թիվ 05-0314 արտահերթ նիստի արձանագրությունը, խնդրում ենք տալ մեկնաբանություն Դիտորդական խմբի 2013թ-ի տարեկան հաշվետվության մեջ տեղ գտած փաստերին:

Կից ներկայացնում ենք՝

1. Դիտորդական խմբի 2013 թ-ի տարեկան հաշվետվությունը / 43 էջ/

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴ.
ՄՏԻՑ № 1168
«21» 03 2014

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ.Սահակյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 1782
«20» 03 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Ձեր՝ 19.03.2014թ. թիվ 2621/1405 գր.

2/2-1-1200
19.05.14թ

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Համիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

ՀՀ ոստիկանությունում քննարկվել է ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերի հասարակական դիտորդների խմբի գործունեության 2013թ. տարեկան հաշվետվությունը, որի կապակցությամբ Ձեզ են ներկայացվում ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները՝ հաշվետվության կառուցվածքին համապատասխան հաջորդականությամբ:

Միաժամանակ հայտնվում է, որ հաշվետվությունում արծարծված մի շարք հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ չեն ներկայացվում՝ կոնկրետ ՁՊՎ-ները նշված չլինելու պատճառով, իսկ մի շարք հարցերին 2013թ. ընթացիկ գրություններով արդեն իսկ տրվել են սպառիչ պատասխաններ:

Առդիր << 13 >> թերթ

**Ոստիկանության գեներալ-մայոր** **Վ.Եղիազարյան**